ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
**ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ**

**ՈՐՈՇՈՒՄ**

N ՐՈ/92-2022

ք.Արտաշատ

„07„ 03 2022թ.

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 4-րդ կետով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 19-րդ մասով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով.

1.Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով հաստատված Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածով նախատեսված միջոցների հաշվին 2022 թվականի փետրվար ամսվա ընթացքում հատուկ առաջադրանքներն և աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար պարգևատրել մարզպետի խորհրդականներին և օգնականներին և մարզպետի տեղակալի օգնականին՝ համաձայն հավելվածի:

2.Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահի պարտականությունները կատարողին՝կատարել վճարում:

Восстановимая подпись

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 **Ս. ԹԵՎՈՆՅԱՆ**